ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30 նոյեմբերի 2021թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 12 անդամներից 9 անդամները:

Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետում կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություն:
2. Պրակտիկայի հարցերի քննարկում:
3. Առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում:
4. 2021-22 թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:
5. 2021-22 թթ. ուս. տարվա ավարտական աշխատանքների թեմաների հաստատում:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Բաց քվեարկությամբ 9 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 1/1

Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետում կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություն» հարցի վերաբերյալ Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորվել է ֆակուլտետի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխ.գիտ.

թեկնածու Սմբատ Դավթյանի ղեկավարությամբ իրականացված «Նոր մշակաբույսերի ներդրումը Տավուշի մարզում» թեմայով հետազոտական աշխատանքը և ֆակուլտետի «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչ, դոցենտ, քիմ.գիտ. թեկնածու Գևորգ Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացված «Տավուշի մարզում պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում «քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» թեմայով հետազոտական աշխատանքը:

ԵՊՀ ԻՄ ներքին դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորված Ֆակուլտետում կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունները քննարկվել է «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի նիստում: Գ.Սիմոնյանը ներկայացրեց.

«Նոր մշակաբույսերի ներդրումը Տավուշի մարզում» թեմայով հետազոտական աշխատանքում բերված է ՀՀ Տավուշի մարզում նոր մշակաբույսերի ներդրման տեխնոլոգիան և ընթացակարգը, որի նպատակն է ներկայացնել Տավուշի մարզում նոր մշակաբույսերի(մորինգա, կիվանո, ռուկոլա, ասիմինա, կայնեյան պղպեղ) ներդրման ուղղությունները: Անդրադարձ է կատարված մարզի կլիմայական պայմանների և հողային ռեսուրսների տիպայնության ու բնութագրերի ուսումնասիրությանը, նոր մշակաբույսերի աճի պայմանների ներկայացմանը և նորագույն տեխնոլոգիաների կիրառությանը: Ուսումնասիրության արդյունքում որոշվել են Տավուշի մարզի այն տարածքները, որտեղ կարող են աճել բարձրակարգ, մերձարևադարձային երկրներին բնորոշ որոշ մշակաբույսեր: Հետազոտության արդյունքում նախատեսվում է տպագրության ներկայացնել «Տավուշի մարզում նոր մշակաբույսերի ներդրման ընթացակարգն ու տեխնոլոգիական միջոցները» վերնագրով գիտական հոդված:

Գ. Սիմոնյանը նշեց, որ «Տավուշի մարզում պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» թեմայով հետազոտական աշխատանքի հաշվետվությանը քննարկվել է նաև «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի նիստում: Հետազոտության արդյունքում

գնահատվել է մարզի աղբյուրների և Աղստև գետի և իր վտակների ջրի որակը, քիմիական կազմը և հաշվարկել Աղստև գետի և իր վտակների ոռոգման գործակիցը, հաշվարկվել է ոռոգելի դաշտերից Աղստև գետ անցած ազոտի և ֆոսֆորի քանակները: Տավուշի մարզի հողերի որակի վերաբերյալ տվյալների վերլուծության արդյունքում ցույց են տրվել որպես պարարտանյութ Տավուշի մարզի բնական ռեսուրսների և անասնապահության արգասիքների օգտագործելու հնարավորությունները: Ուսումնասիրվել է նաև մարզի քիմիական պարարտանյութերի վաճառակետերի տեղաբաշխումն, ու մշակվել են հանձնարարականներ դրանց կարգավորման մասին: Պատրաստվել է «Տավուշի մարզի պայմաններում պարարտանյութերի օգտագործման պայմանները» մեթոդական ցուցումների ձեռնարկը: Հետազոտության արդյունքում տպագրվել է 3 գիտական հոդված և մեկ զեկուցման թեզիս:

Արտահայտվեցին – Ա.Հովակիմյանը, Մ.Զաքարյանը, Գ. Գուլակյանը, Արտահայտվողները դրական կարծիք հայտնեցին հետազոտական աշխատանքի կատարման մասին և նշեցին, որ ներկայացված հաշվետվությունում աշխատանքները կատարվել են ըստ պայմանագրով նախատեսված առաջադրանքի և օրացուցային պլանին համապատասխան:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1.1

➢ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, տեխ.գիտ. թեկնածու Ս. Դավթյանի ղեկավարությամբ իրականացված «Նոր մշակաբույսերի ներդրումը Տավուշի մարզում» թեմայով հետազոտական աշխատանքը կատարված է պատշաճ կերպով և համապատասխանում է նման աշխատանքների ներկայացման որակական չափանիշներին: Աշխատանքի ընթացակարգին, բովանդակութանն ու արդյունքներին տալ դրական եզրակացություն:

➢ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ, դոցենտ, քիմ.գիտ. թեկնածու Գ. Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացված «Տավուշի մարզում

պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» թեմայով հետազոտական աշխատանքը կատարված է պատշաճ կարգով և համապատասխանում է նման աշխատանքների ներկայացման որակական չափանիշներին:

Աշխատանքի ընթացակարգին, բովանդակութանն ու արդյունքներին տալ դրական եզրակացություն:

Օրակարգի 2–րդ՝ «Արտադրական պրակտիկայի հարցերի քննարկում» հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ պրակտիկայի ղեկավար Ք.Օթարյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հեռակա ուսուցման բաժնի <<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա>> մասնագիտության 5-րդ կուրսի թվով 20 ուսանողներից 19 ուսանողների արտադրական պրակտիկան կազմակերպվել է ԵՊՀ ԻՄ համակարգչային թիվ 2 լաբորատորիայում և << ԷԼ ԹԻ ՔՈԴԻՆԳ>> ՍՊԸ-ում, 05/10/2021- 30/10/2021 ժամանակահատվածում:

Մեկ ուսանող՝ Ռոբերտ Մելիքսեթյանը, պրակտիկան անցկացրել է <<Սոֆթ Կոնստրակտ>> ՓԲԸ-ում, ըստ ԵՊՀ ԻՄ պլանով նախատեսված պրակտիկայի անցկացման ընթացքի ու բովանդակության:

Պրակտիկայի պաշտպանությանը ուսանողները հանդես են եկել ԵՊՀ ԻՄ պրակտիկայի անցկացման պահանջին համապատասխան աշխատանքներով:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները գոհ էին, որ ավելի խոր պատկերացում կազմեցին իրենց ընտրած մասնագիտության մասին:

Ուսանողները օրագրերում գրառել են իրենց առաջարկությունները և դիտողությունները, որը հիմնականում հետևյալն է.

Ընդլայնել պրակտիկայի անցկացման վայրերը, կարողանան կատարել ծրագրավորման տարբեր ընկերությունների ընտրություն:

Ծրագրավորողի մասնագիտության համար 30 ժամը բավականին կարճ է, ցանկալի է երկարացնել պրակտիկայի անցկացման տևողությունը:

Արտահայտվեցին. Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա ԿԾ պատասխանատու, Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը ասաց, որ ուսանողների

առաջարկությունները կքննարկեն ուսումնական վարչության հետ և կառաջարկի 2020-2021 ուս 2-րդ կիսամյակում առկա ուսուցման <<Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա>> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների պրակտիկան կկազմակերպել հնարավորինս երկարար ժամաքանակով և տարպեր կազմակերպություններում, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ համակարգչային լաբորատորիաներում:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց.

ՈՐՈՇՈՒՄ 1.2

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի 3–րդ՝ «Առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքների ամփոփում**»** , հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն է.

Մ.Զաքարյանը նշեց, որ առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների արդյունքները գոհացուցիչ չեն:

Հիմնականում ցածր գնահատականները գերակշռում են տղաների մոտ: Բավականին շատ են նաև բացակայությունները: Հիմնական պատճառը կորոնավիրուսային հիվանդությունն է:

Արտահայտվեցին. Գ.Սարգսյանը նշեց, որ ցածր գնահատականների հիմնական պատճառն այն է, որ ուսանողները դրսևորում են պասիվություն: Խորհելու տեղ ունենք մոտիվացման առումով: Ա. Հովակիմյանը ներկայացրեց, որ ԵՊՀ-ում և Սլավոնական համալսարանում տղաները շատ ակտիվ են, մոտիվացված են: Առաջարկեց տղների հետ լրացուցիչ աշխատել, բանակ գնալը պատճառաբանություն չդարձնեն, անհրաժեշտ է մոտիվացնել: Ա.Հովակիմյանը առաջարկեց լավ սովորող ուսանողներին նախապատրաստեն, որպեսզի մասնակցեն ԵՊՀ-ում կազմակերպվող օլիմպիադաներին:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1.3

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի 4–րդ՝ «2021-22 թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում», հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն է.

2-րդ ընթացիկ քննությունները անցկացվելու են OFFLINE, առկա ուսուցման համակարգում դեկտեմբերի 22-28 , հեռակա ուսուցման համակարգում դեկտեմբերի 15-28 ընկած ժամանակահատվածում: Քննությունները կանցկացվեն 2022թ հունվարի 11-27 ընկած ժամանակահատվածում: Գրաֆիկը կազմված է դասախոսների հաճածումներին համապատասխան, քննարկվել է դասախոսների հետ և կտեղադրվի ԵՊՀ ԻՄ կայքում:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց

ՈՐՈՇՈՒՄ 1.4

Ընդունել ի գիտություն:

Օրակարգի 5–րդ՝ «2021-22 թթ. ուս. տարվա ավարտական աշխատանքների թեմաների հաստատում», հարցի վերաբերյալ Մ.Զաքարյանի հաղորդումը հետևյալն է.

Ղեկավարները թեմաները ներկայացրել են ամբիոն, որոնք տրամադրվել են ուսանողներին: Թեմաների վերջնական հաստատումը կլինի, երբ ղեկավարները թեմաների անոտացիաները կներկայացնեն ամբիոն:

Բաց քվեարկությամբ՝ 9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, որոշվց.

ՈՐՈՇՈՒՄ 1.5

Ավարտական աշխատանքի ղեկավարները ամբիոններ ներկայացնեն թեմաների անոտացիաները մինչև դեկտեմբերի 2-ը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Ք.Վ.ՕԹԱՐՅԱՆ